# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

Մեզանում գրականութեամբ պարապւողներն ըստ մեծի մասին աղքատ մարդիկ են․ Եթէ նըրանցից մէկը հեղինակել, կամ թարգմանել էր մի և լցէ գիրք, տարիներով նորա աշխատութիւնը լոյս չէ տեսնում, մնում է տանից տպագրվելու․

Ինչ անէ հեղինակը․ Նորա աշխոյժը սառչում է, նա յուսահատվում է և դադարում է աշխատելուց, տեսնելով, որ իւր պարապմունքը ոչ միայն հաց չէ տալիս նորան, այլ և նա զրկվում է իւր գործունէութեան բարոյական բաւականութիւնից․

Մի միջոց, որ շատ անգամ գործ է դրվում մեզանում գրքեր տպագրելու, այն է, որ հեղինակը, կամ նորա բարեկամներից մէկը ստիպւած են լինում բաժանորդագրութեան թերթը գրպանը դրած ման ածել, դորան նորան խնդրել, որ մի քանի օրինակ ստորագրեն, արծաթը կանխիկ վճարելով․ Եւ եթէ յաջողվում է մի այդպիսի ձանձրալի ձեռնարկութիւնը, այն ևս ոչ թէ հեղինակի տաղանդը յարգելու և նորան խրախոյս տալու համար է լինում, ոչ, այլ որպէս ռամկօրէն ասում են՝ «խաթրի համար»․

Թէ յիշեալ միջոցներով գիրք տպագրելը որքան է վիրաւորում հեղինակի անձնասիրութիւնը, այդ ինքնըստինքեան հասկանալի է․ բայց ինչ հնարներ պէտք է գործ դրած նրանց այդ դժւարութիւններից ազատելու համար․

***

Առհասարակ գրքերի պահանջը մեզանում այնքան զգալի է, որ այդ մասին երկար խօսելը բոլորովին աւելորդ է․

Մանկավարժական ժամանակակից խնդիրն արդէն զարթել է մեր մէջ, և մենք խիստ յաճախ լսում ենք՝ նոր մեթոդ, նոր եղանակ պէտք է մըտցնել դպրոցների մէջ. հին փթած դրութիւնը պէտք է ոչնչացնել և նոր համակարգութեամբ կազմակերպել ուսումնարանների ձևը և այլն․

Բայց այդ վերանորոգութիւններին հարկաւորած դասագրքերն ունենք արդեօք․—Այդ մասին ոչ ոք չէ մտածում․

Գիտութիւնների և արհեստների դասաւանդութիւնը մայրենի լեզուով պէտք է լինի, կրկնում են նոյն ձայները. և երեխան երեխայութիւնից պէտք է սովորի մտածել և խօսել ազգային լեզուով.

Իսկ այդ առարկաներին հարկաւոր ձեռնարկներ ունենք․—Դարձեալ ոչ ոք չէ մտածում․

Յարաժամ լսում ենք՝—ժողովրդի մէջ պէտք է ընթերցանութիւն տարածել, զարուս լուսաւոր գաղափարները պէտք է նորա մէջ տարրացնել․ արհեստների և գիտութիւնների հետ պէտք է ծանօթացնել․ և հեռացնել պէտք է նրանից վաղեմի նախապաշարմունքները, սովորեցնելով նորան ազատ և առողջ դատողութիւն․ Ահա այդպիսի հազար ու մէկ ցանկութիւններ լսվում են մեզանում․ Բայց ո՞ր գրքերի միջոցով կարող ենք հասնել դորան․ Պատասխանը կը լինի՝—գրքեր չունենք․

***

Ինչու չունենք․

Կօշկակարն իւր արհեստով ապրում է․ հիւսն իւր արհեստով ընտանիք է պահում. իսկ գրքերի հեղինակն իւր գլուխն անգամ պահել չէ կարողանում․ Նորա արդիւնաբերութիւնը մի այնպիսի մթերք է, որ խիստ սակաւ է գնահատվում․ Չը կայ մի ձեռք, որ գնելով նորա աշխատութեան նիւթը, հաղորդէր ամբոխին․

Մեր հայ գրավաճառները մեծ մասամբ օտար ազգի գրքերի առևտուրով են պարապւած․ Նոքա խիստ հեռու են պահում իւրեանց այն մտքից, որ գնեն հայ հեղինակի աշխատութիւնը, և իւրեանց ծախսով հրատարակելով, տարածեն ամբոխի մէջ․ Եւ եթէ նրանցից մէկը յօժարվում է գնել մի աշխատութիւն, այն ևս այնպիսի պայմաններով, որ հեղինակի թղթի և մելանի արժէքը չէ դուրս բերում․

Իսկ առանձին մեկենասներն մեր մէջ հազուագիւտ բաներ են․ Մեր հարուստները պատրաստ են հազարներով մսխել իւրեանց փառասիրութեան համար. իսկ մի հեղինակի միջոց տալ իւր աշխատութիւնը ի լոյս ածելու, այդ նրանց համար մահ է․

***

Մասնաւոր անձանց նուիրատւութեամբ գիրք տպագրելը հաստատուն լինել չէ կարող, որովհետև զոհաբերութիւնը որքան գեղեցիկ բան է այնքան և անտևողական է․

Ըստ իմ գրքերի տարածելը ժողովրդի մէջ ոչ թէ մասնաւոր մարդու գործ է, այլ մի կազմակերպուած ընկերութեան գործ․

Թողնենք օտարազգիների մէջ զանազան ձևերով եղած տպագրական ընկերութիւնները. Թողնենք Կ․ Պօլսի մէջ նոյն նպատակով կազմուած մի քանի ընկերութիւններ, յիշենք միայն Վենետիկի և Վիեննայի հայ աբեղաների միաբանութիւնները․ Նոքա, ոչ միայն ազատեցին մեր հին մատենագրութիւնը Հայաստանի վանքերի խորշերում փըթելուց, այլ և ընծայեցին մեզ թւով շատ ինքնուրոյն և թարգմանական հեղինակութիւններ․ Նոքա մի կողմից տարածեցին մեր հասարակութեան մէջ ընթերցասիրութիւն, ծանօթացրին եւրոպական գիտութիւնների հետ, միւս կողմից, հարստացրին իւրեանց վանքը․

Ս․ Էջմիածնայ տպարանը կարող էր նոյն դերը խաղալ, ինչ որ աբեղէն վենետիկցիք, եթէ նորա գործունէութիւնը չը լինէր սահմանափակւած և եթէ վանքի միաբանութիւնը կազմւած լինէր

գիտնական արեգաններից և նոքա իւրեանց նուիրած լինէին գրականութեան։

Բայց դժբախտաբար, Ս. Էջմիածնայ մամուլը ձայնոցներով և սուրբ գրքերի հին մեկնութիւններով է զբաղուած...

***

Վերոյիշեալ հանգամանքներն աչքի առաջ ունենալով, մեզ համար խիստ զգալի է լինում մի օրինաւոր տ պ ա գ ր ա կ ա ն  ը ն կ ե ր ո ւ թ ե ա ն կարեւորութիւնը։

Բայց Թիֆլիսեցի հայը ոչ մի գործի միջամուխ չէ լինում, մինչև նորա մէջ մի չօշափելի օգուտ չը տեսնէ։ Հինգ արտասով առնել, տասն արտասով ծախել, այդ բաները նորան այնքան սովորական են, որ նա մի ուրիշ առևտրական հիմնարկութեան վերա չէ մտածում։ Առհասարակ Թիֆլիսեցի հայի գործունէութիւնը վաճառականական ասպարիզում դ ա լ ա լ ի գործունէութիւն է,— մի ձեռքից առնել, միւս ձեռքին տալ. նա ինքը մի նիւթ արդիւնաբերելու ընդունակ չէ։

Ուրեմն խիստ դժուար է հասկացնել, թէ վաճառականական սկզբների վերա հիմնուած մի տպագրական ընկերութիւն կարող էր տալ նրանց, եթէ ոչ այն կողոպուտները, որ անում են իւրեանց առևտուրից, այլ մի արդար և խղճմտանքով արդիւնք։ Իսկ դորանով մեր դրամատէրները բաւականանալ կարող չեն։ Դարձեալ ստիպուած ենք դիմել ուրիշ միջոցների։

***

«Մշակի» 45-րդ համարում տպուած էր մի լուր, թէ մեծապատիւ Օնանովի յորդորանքով հաւաքվում է մի գումար Ներսիսեան դպրոցի յօբելեանի տարեդարձը կատարելու համար։ «Մշակը» իւր կողմից արել էր մի առաջարկութիւն, թէ աւելի լաւ կը լինէր յօբելեանի հանդէսն որքան կարելի է համեստ կերպով կատարել և աւելորդ գումարն ընծայել դպրոցին, նորա տոկոսով մի աշակերտ արտասահմանում ուսանելու համար։

Այժմ լսում ենք, որ քանի օր առաջ մեծապատիւ Օնանովի հոգաբարձութեամբ կազմուել է մի ժողով բժշկապետ Շահպարոնեանցի տանը, ուր հաւաքուած են եղել Ներսէսեան դպրոցի հին աշակերտներից ոմանք, ստորագրել են մի նշանաւոր գումար, որոյ տոկոսով մի աշակերտ պէտք է ուսում առնէ արտասահմանում յանուն հանգուցեալ Ալամդարեանի, որը նոցա վարժապետն է եղել։ Արդարև, երախտագիտութեան մի գովելի արտայայտութիւն է այդ դէպի այն մարդու յիշատակը, որ նոցա մտաւոր և բարոյական դաստիարակիչն է եղել։

Բայց հանդիսականներից մինը պարոն Ն. Տ. Շ. յայտնելով գրատպութեան այժմեան մեծ կարեւորութիւնը, և նկարագրելով հեղինակների աննախանձելի դրութիւնը, նոյն ժողովի մէջ արել է ուրիշ առաջարկութիւն, թէ հաւաքուած գումարը փոխանակ գործ դնելու մի աշակերտ ուսում առնելու համար, աւելի օգտաւէտ կը լինէր նոյն գումարով կազմել մի դրամագլուխ, որոյ տոկոսով տպագրուէին զանազան գրքեր, և այդպէսով միջոց դրուէր հեղինակներին թէ ապրելու և թէ եռանդով աշխատելու։

Որպէս լսում ենք, պարոն Ն. Տ. Շ...ի առաջարկութիւնն ընդունվել է ժողովի ընդհանուր համակրութեամբ և նոքա վճռել են՝—բացի հանգուցեալ Ալամդարեանի անունով հաւաքուած նուիրատուութիւնները, կազմել մի տպագրական ընկերութիւն, ստորագրութեամբ հաւաքելով մի առանձին դրամագլուխ, գրատպութեան գործին նպաստելու համար։

Յուսով ենք, որ մեծապատիւ Օնանովն ի թիւս իւր այլ բարեգործութեանց կատարումն կը տայ և տպագրական ընկերութեան հաստատութեանը, որը մեր կենսական ամենամեծ պահանջներից մէկն է, և այդպէսով կը դիւրացնէ գրքերի տարածումը մեր հասարակութեան մէջ։

Յիշեալ գումարի գործադրութեան կամ նորա ընկերութեան պայմանների մասին խօսելն աւելորդ է այժմ, միայն այսքանը պէտք է ասել, որ դրամագլուխը պէտք է հասնի այն քանակութեան, որ գոնեա տարեկան 1000 րուբլի տոկոս բերէ։ Այն ժամանակ կարող էին տպագրուիլ ամեն մի տարի երեք գրքեր, մօտաւորապէս 300 երեսից բաղկացած, և իւրաքանչիւր գրքից 1200 օրինակ։

***

Բոլորովին անիրագործելի բան չէ մի այդպիսի տպագրական ընկերութիւն, զոհաբերութեան սկզբների վերա հիմնուած, այնպիսի անձանց կողմից, որ այժմ մտածում են այդ մասին։ Մանաւանդ, որքան մեզ յայտնի է, թէեւ նոքա անվերադառնալի կերպով ընծայելու են մի գումար, բայց նորա տոկոսի փոխարէն իւրաքանչիւրն միշտ և ժառանգաբար ստանալու է մի մի օրինակ ընկերութեան բոլոր հրատարակութիւններից։

Ներսէսեան դպրոցն ընծայել է մեր հասարակութեանը, բացի իւրեանց հայրենի լեզուին ծանօթ և ազգային ոգով կրթուած բազմաթիւ աշակերտներ, այլ նոյն անձանց մէջ շատերը փայլում են բախտի առանձին բարիքները.—նոքա մեր քաղաքի հարուստականների շարքումն են գտնւում։ Որպէս լսում ենք, մեծապատիւ Օնանովի համախոհները, որք մտածում են տպագրական ընկերութեան մասին, նոյն դասակարգի մարդիք են։ Ուրեմն նրանց համար մի մեծ ծանրութիւն չէր լինի յօբելեանի առիթով կազմել մի մշտական դրամագլուխ օգտաւէտ հրատարակութիւնների համար։ Այդպիսով, մի կողմից հեղինակներին միջոց կը դրուէր աշխատելու, միւս կողմից, թէ մեր դպրոցները և թէ հասարակութիւնը զրկուած չէր լինիլ այն գրքերից, որոց մեծ կարօտութիւն ունի.

Եթէ պարոն Ն. Տ. Շ...ի առաջարկութիւնը բոլորովին կիրագործուի, այն ժամանակ մենք պատրաստ ենք հրատարակել մի ամբողջ ծրագիր յիշեալ տպագրական հիմնարկութեան թէ կանոնների և թէ նորա վարչութեան ձևերի մասին։

Մելիքզադէ